## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**29.03.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-2 ծածկագրով Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի**

ք.Երևան «25» հուլիս 2017թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 29.03.2017թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 4.1 կետում «600000 (վեց հարյուր հազար)» թվերն ու բառերը փոխարինել «660000 (վեց հարյուր վաթսուն հազար)»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «օգոստոս», «սեպտեմբեր», «հոկտեմբեր», «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակներում «600,000» թվերը փոխարինել «660,000» թվերով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմ | «Գարանտսերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական թ.1 շենք | ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 193004674290 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00840437 |
| էլ. հասցեն՝ gnumner@gov.am | էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com |
| | հեռ. 28-54-47 |
| ______________ | ______________ |
| / Դ. Բեգլարյան / | / Մ. Նիկողոսյան / |
| Կ.Տ | Կ.Տ |